# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ՀԱԼԱՎԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

---

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Հալավար համայնք, հասցե գ. Հալավար
էլ. փոստ halavar.gyuxapetaran@mail. ru

Թիվ 021/115

«05» դեկտեմբերի 2013թ.

*Հայաստանի Հանրապետության*
*Լոռու մարզպետ պարոն՝*
*Ա. Նալբանդյանին*

*Հարգելի պարոն Նալբանդյան.*

Կից ներկայացվում է Հալավար համայնքի ղեկավարի թիվ 35, 36, 37, 38, 39-Ն որոշումները և ավագանու թիվ 33, 34, 35-Ն/կից հավելվածը/, 36, 37-Ա/կից հավելվածը/ որոշումները:

Առդիր՝ 14 թերթ:

*Աշխատակազմի քարտուղար՝* *Ա. Մուկուչյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՀԱԼԱՎԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

---

Յայաստանի Յանրապետության Լոռու մարզի
Յալավար համայնք, հասցե գ. Յալավար

էլ. փոստ halavar.gyuxapetaran@mail. ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11-ը նոյեմբերի 2013 թվականի
N/ 35

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱԼԱՎԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 21 -Ի ԹԻՎ 31 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածով.*

*Որոշում եմ՝*

ՀՀ Լոռու մարզի Հալավար համայնքի ղեկավարի 2013թվականի հոկտեմբերի 21-ի թիվ 31 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1. հանել՝ որոշման վերնագրում և ընդունման հիմք հանդիսացող փաստարկներից տնամերձ հողամասի բառերից հետո « և կիսակառույց բնակելի տան » բառերը
2. հանել՝ որոշման ընդունման հիմք հանդիսացող փաստարկներից ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով բառերից հետո « և 2002թ դեկտեմբերի 26-ի «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՕ- 510-Ն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասով» բառերը:
3. որոշման 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«06-059-0068-0015 ծածկագրով 0.48661 հա տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված 24.75քմ մակերեսով կիսակառույց բնակելի տունը գրանցել որպես ինքնակամ կառույց»:

*Հալավար համայնքի ղեկավար* *Ս. Հակոբջանյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՀԱԼԱՎԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

---

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Հալավար համայնք, հասցե գ. Հալավար

էլ. փոստ halavar.gyuxapetaran@mail. ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11-ը նոյեմբերի 2013 թվականի
N/ 36

## ՀԱԼԱՎԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍԻՑ « ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ»ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆԸ՝ ԱՆԴԱՄԱՎՃԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ, 32-րդ հոդվածներով , 34-րդ հոդվածի 5-րդ կետով և համաձայն համայնքի ավագանու 2013թվականի* ***նոյեմբերի 08****-ի թիվ 33 որոշման.*

*Որոշում եմ ՝*

Հալավար համայնքի 2013 թվականի բյուջեի ծախսային մասի՝ բաժին 08, խումբ 4,դաս 2-ից, ըստ տնտեսագիտական դասակարգման 4819 հոդվածից /Նվիրատվություն այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին/, 1600 (մեկ հազար վեց հարյուր ) ՀՀ դրամ փոխանցել « Հայաստանի համայնքների միություն» կազմակերպության հաշվին , որպես անդամավճար:

*Հալավար համայնքի ղեկավար՝* *Ս. Հակոբջանյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՀԱԼԱՎԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

---

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Հալավար համայնք, հասցե գ. Հալավար

էլ. փոստ halavar.gyuxapetaran@mail. ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02-ը դեկտեմբերի 2013 թվականի
N/ 37

## ՍՈՍ ՈՓՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ , ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏ ԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Հաշվի առնելով Սոս Ոփյանի դիմումը Հալավար գյուղի տարածքում սեփականության իրավունքով իրեն պատկանող , 06-059---0070-004 ծածկագրով 0.38829հա տնամերձ հողամասի հողհատկացման հիմքերը վերականգնելու և պետական գրանցում կատարելու մասին . ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 29.12.2005թ թիվ 2387-Ն որոշումով և 2002թվականի դեկտեմբերի 26-ի « Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրական կարգավիճակի մասին» ՀՕ-510-Ն օրենքի 7-րդ հոդվածով, և հիմք ընդունելով 08.04.2004թ Հալավարի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի թիվ 2 որոշումը, և Հալավար համայնքի կադաստրային քարտեզը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ կետերով.*

*Որոշում եմ՝*

1. Վերականգնել Հալավար գյուղի տարածքում սեփականության իրավունքով Սոս Ոփյանին պատկանող , 06-059-00700-0004 ծածկագրով 0.38829 հա տնամերձ հողամասի հողհատկացման հիմքերը , համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

2.Անշարժ գույքին տրամադրել գ. Հալավար 4-րդ փողոց 1-ին փակուղի թիվ 1 փոստային հասցեն:

4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու տարածքային ստորաբաժանումում:

*Հալավար համայնքի ղեկավար՝* *Ս. Հակոբջանյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՀԱԼԱՎԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

---

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Հալավար համայնք, հասցե գ. Հալավար

էլ. փոստ halavar.gyuxapetaran@mail. ru

# Ո Ր Ո Շ Ու Մ
11-ը նոյեմբերի 2013 թվականի
N/ 38

## « ԼՈՌՈՒ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ, 32-րդ հոդվածներով , 34-րդ հոդվածի 5-րդ կետով և համաձայն համայնքի ավագանու 2013թվականի* ***նոյեմբերի 08****-ի թիվ 34 որոշման.*
*Որոշում եմ `*

Հալավար համայնքի ս/թ բյուջեի ծախսային մասի՝ բաժին 02, խումբ2, դաս 1-ից, ըստ տնտեսագիտական դասակարգման 4819 հոդվածից հանգանակության կարգով 10.0 (տաս հազար ) ՀՀ դրամ փոխանցել « Լոռու արտակարգ իրավիճակների » հիմնադրամին:

*Հալավար համայնքի ղեկավար՝* *Ս. Հակոբջանյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՀԱԼԱՎԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

---

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Հալավար համայնք, հասցե գ. Հալավար
էլ. փոստ halavar.gyuxapetaran@mail

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**02-ը դեկտեմբերի 2013 թվականի**
**N/ 39-Ն**

## ՀԱԼԱՎԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓՈՓՈԽՎԱԾ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 33րդ հոդվածով և առաջնորդվելով Հալավար համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 02-ի «Հալավար համայնքի 2013թվականի փոփոխված բյուջեն հաստատելու մասին » թիվ 38-Ն որոշմամբ*

*Որոշում եմ.*

1. Հաստատել Հալավար համայնքի 2013 թվականի փոփոխված բյուջեն՝ եկամտային և ելքային մասերի բաշխումը ըստ եռամսյակների / հավելված1,2/:
2. Հաստատել համայնքի ենթակայության բյուջետային հիմնարկների 2013 թվականի ծախսերի նախահաշիվները , ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման հոդվածների / հավելված2/:

*Հալավար համայնքի ղեկավար՝* *Ս. Հակոբջանյան*

2013թ. դեկտեմբերի 02
գ. Հալավար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՀԱԼԱՎԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

---

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Հալավար համայնք, հասցե գ. Հալավար

էլ. փոստ halavar.gyuxapetaran@mail. ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08-ը նոյեմբերի 2013 թվականի
N/ 33

## ՀԱԼԱՎԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍԻՑ « ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ»ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆԸ ԱՆԴԱՄԱՎՃԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով*

*Հալավար գյուղական համայնքի ավագանին որոշում է.*

Թույլատրել՝ Հալավար համայնքի ղեկավարին 2013 թվականի բյուջեի ծախսային մասի՝ բաժին 08, խումբ 4, դաս 2-ից, ըստ տնտեսագիտական դասակարգման 4819 հոդվածից /Նվիրատվություն այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին/ 1600 (մեկ հազար վեց հարյուր ) ՀՀ դրամ փոխանցել « Հայաստանի համայնքների միություն» կազմակերպության հաշվին , որպես անդամավճար:

| *Համայնքի ավագանու անդամներ* | *Կողմ (5)* | *Դեմ (0)* | *Ձեռնպահ (0)* |
|---|---|---|---|
| *Աբազյան Գոհար Երվանդի* | [signature] | | |
| *Բաբայան Վահրամ Շահվալադի* | [signature] | | |
| *Հակոբջանյան Վոլոդյա Վասիլի* | [signature] | | |
| *Մուկուչյան Ռոլանդ Մամիկոնի* | [signature] | | |
| *Մարտիրոսյան Նինա Լևոնի* | [signature] | | |

*Հալավար համայնքի ղեկավար* [signature] *Ս. Հակոբջանյան*

Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՀԱԼԱՎԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

---

Յայաստանի Յանրապետության Լոռու մարզի
Յալավար համայնք, հասցե գ. Յալավար

էլ. փոստ halavar.gyuxapetaran@mail. ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08-ը նոյեմբերի 2013 թվականի
N/ 34

## «ԼՈՌՈՒ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով*

*Հալավար գյուղական համայնքի ավագանին որոշում է.*

Թույլատրել՝ Հալավար համայնքի ղեկավարին 2013թվականի բյուջեի ծախսային մասի՝ բաժին 02, խումբ 2, դաս 1-ից, ըստ տնտեսագիտական դասակարգման 4819 հոդվածից հանգանակության կարգով 10.0(տաս) հազար ՀՀ դրամ փոխանցել « Լոռու արտակարգ իրավիճակների » հիմնադրամին:

| Յամայնքի ավագանու անդամներ | Կողմ (5) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) |
|---|---|---|---|
| Աբազյան Գոհար Երվանդի | | | |
| Բաբայան Վահրամ Շահվալադի | | | |
| Յակոբջանյան Վոլոդյա Վասիլի | | | |
| Մուկուչյան Ռոլանդ Մամիկոնի | | | |
| Մարտիրոսյան Նինա Լևոնի | | | |

*Հալավար*
*համայնքի ղեկավար* *Ս. Հակոբջանյան*

Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՀԱԼԱՎԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

---

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Հալավար համայնք, հասցե գ. Հալավար

էլ. փոստ halavar.gyuxapetaran@mail. ru

# Ո Ր Ո Շ Ու Մ

**02-ը դեկտեմբերի 2013 թվականի**
**N 35-Ն**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱԼԱՎԱՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածներով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Հալավար գյուղական համայնքի ավագանին որոշում է.

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Հալավար գյուղական համայնքում 2014 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

| *Համայնքի ավագանու անդամներ* | *Կողմ (5)* | *Դեմ (0)* | *Ձեռնպահ (0)* |
|---|---|---|---|
| *Աբազյան Գոհար Երվանդի* | | | |
| *Բաբայան Վահրամ Շահվալադի* | | | |
| *Հակոբջանյան Վոլոդյա Վասիլի* | | | |
| *Մուկուչյան Ռոլանդ Մամիկոնի* | | | |
| *Մարտիրոսյան Նինա Լևոնի* | | | |

*Հալավար համայնքի ղեկավար՝* *Ս. Հակոբջանյան*

2013թ. դեկտեմբերի 02
գ. Հալավար

Հավելված
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Հալավար գյուղական համայնքի ավագանու
2013 թ. դեկտեմբերի 02-ի թիվ 35-Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱԼԱՎԱՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

1) հիմնական օբյեկտների համար՝

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտներիհամար՝ չորս հազար հինգ հարյուր դրամ.

բ. սույն հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ չնախատեսված օբյեկտների համար՝

201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ հինգ հազար դրամ.

501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ տասնհինգ հազար դրամ.

1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ տասնհինգ հազար դրամ.

3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ երեսուն հազար դրամ.

2) ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝

հինգ հարյուր դրամ.

բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝

մեկ հազար հինգ հարյուր դրամ.

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների(բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով, տեղական տուրքը սահմանել՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ հինգ հարյուր դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրք սահմանել՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում, յուրաքանչյուր եռամսյակի համար՝ հինգ հազար դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում, յուրաքանչյուր եռամսյակի համար՝ հինգ հազար դրամ.

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչյուր օրվա համար ՝ երեք հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ հիսուն հազար դրամ.

3) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ տասնհինգ հազար դրամ.

4) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար՝

հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ երկու հազար դրամ.

ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ հինգ հարյուր դրամ.

6.Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանել հիսուն հազար դրամ:

7. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

1) առևտրի օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ
2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ հիսուն հազար դրամ
3)բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հազար դրամ.
4) խաղատների կազմակերպման համար՝ հինգ հարյուր հազար դրամ
5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ երկու հարյուր հիսուն հազար
6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ մեկ հարյուր հազար դրամ
դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ մեկ հազար դրամ.

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երեք հազար դրամ.

3) այլ արտաքին գովազդի համար՝ մեկ հազար դրամ.

4) դատարկ գովազդային վահանակների համար՝ յոթ հարյուր դրամ:

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ հինգ հազար դրամ:

Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝ հիսուն հազար դրամ:

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝ հինգ հազար դրամ:

11. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու ավարտած շինարարության շահագործումը փաստագրելու համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման տեղական վճարը սահմանել՝երկու հազար դրամ:
12. Համայնքի տարածքում տեղական ինքնակառավարման մարմնի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման տեղական վճարը սահմանել՝ երկու հազար դրամ:
13. Համայնքի տարածքում տեղական ինքնակառավարման մարմնի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից տեղական վճարը սահմանել՝ երկու հազար դրամ:
14. Սույն հոդվածի 1-ին , 2-րդ, 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը հաշվարկվում են 0.3գործակցի կիրառմամբ:

Համայնքի ղեկավար՝ Ս. Հակոբջանյան

02 դեկտեմբերի 2013թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՀԱԼԱՎԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

---

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Հալավար համայնք, հասցե գ. Հալավար

էլ. փոստ halavar.gyuxapetaran@mail. ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02-ը դեկտեմբերի 2013 թվականի
N 36

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱԼԱՎԱՐԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ_

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետով, « Համայնքային ծառայության մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով և 26-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով`

Հալավար համայնքի ավագանին որոշում է.

Հալավար համայնքի գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների իրենց զբաղեցրած պաշտոնի ենթախմբին համապատասխան դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճանի համար սահմանել հավելավճար `տվյալ պաշտոնի ենթախմբի համար համայնքի ավագանու որոշմամբ հաստատված դրույքաչափի 5%-ի չափով:

| *Համայնքի ավագանու անդամներ* | *Կողմ (5)* | *Դեմ (0)* | *Ձեռնպահ (0)* |
|---|---|---|---|
| *Աբազյան Գոհար Երվանդի* | | | |
| *Բաբայան Վահրամ Շահվալադի* | | | |
| *Հակոբջանյան Վոլոդյա Վասիլի* | | | |
| *Մուկուչյան Ռոլանդ Մամիկոնի* | | | |
| *Մարտիրոսյան Նինա Լևոնի* | | | |

*Հալավար համայնքի ղեկավար* *Ս. Հակոբջանյան*

2013թ. դեկտեմբերի 02
գ. Հալավար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՀԱԼԱՎԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

---

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Հալավար համայնք, հասցե գ. Հալավար

էլ. փոստ halavar.gyuxapetaran@mail. ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**02-ը դեկտեմբերի 2013 թվականի**

**N 37-Ա**

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱԼԱՎԱՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ , ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ , ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

***Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ, 26-րդ կետերով , «Իրավական ակտերի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասով և 72-րդ հոդվածով***

Հալավար գյուղական համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել Հալավարի գյուղական համայնքի ղեկավարի վարձատրության չափը , համայնքի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հալավարի գյուղական համայնքի ավագանու 2013 թվականի հուլիսի 10-ի « Հալավարի գյուղական համայնքի ղեկավարի վարձատրության չափը, համայնքի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին » թիվ 17-Ա որոշումը :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2014 թվականի հունվարի 01-ից:

| *Համայնքի ավագանու անդամներ* | *Կողմ (5)* | *Դեմ (0)* | *Ձեռնպահ (0)* |
|---|---|---|---|
| *Աբազյան Գոհար Երվանդի* | | | |
| *Բաբայան Վահրամ Շահվալադի* | | | |
| *Հակոբջանյան Վոլոդյա Վասիլի* | | | |
| *Մուկուչյան Ռոլանդ Մամիկոնի* | | | |
| *Մարտիրոսյան Նինա Լևոնի* | | | |

*Հալավար համայնքի ղեկավար՝* *Ս. Հակոբջանյան*

2013թ. դեկտեմբերի 02
գ. Հալավար

*Հավելված*
*Հալավարի գյուղական համայնքի ավագանու*
*2013 թվականի դեկտեմբերի 02-ի N 37-Ա որոշման*

ՀԱԼԱՎԱՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 4 (չորս)
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| *ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ* | *ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ* | *ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ)* |
|---|---|---|
| *Համայնքի ղեկավար* | 1 | 110000 |
| *Համայնքի. գյուղապետարանի. աշխատակազմի քարտուղար* | 1 | 88000 |
| *Աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ* | 1 | 70000 |
| *Տեխնիկական սպասարկում իրականացնող աշխատող-հավաքարար* | 1 | 59600 |
| *Ընդամենը* | 4 | 327600 |

*Հալավար*
*համայնքի ղեկավար՝* *Ս. Հակոբջանյան*